ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

15 փետրվարի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրապյանը, Արայիկ Քոչարյանը, Գրիգոր Կարապետյանը, Պավլիկ Պապինյանը, Շուշանիկ Հակոբյանը, Սերյոժա Սարդարյանը, Էմմա Գասպարյանը և Արմենուհի Ոսկանյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Թիանա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակա ավագանու անդամներ չկան:

Նիստին նեկա էին ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գուռ Ասրյանը, Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Միեր Խեչումյանը, վարչական ղեկավարներ:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 15 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 11.00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 13-14-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

13. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրք և տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

14. Փամբակ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
զեկ. Ռ. Մինասյան

Քվեարկությամբ, կողմ՝ 15 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 ընդունվեց որոշում / կցվում է որոշում N 001-Ա/ :

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.
Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի փետրվարի 15-ի թիվ 01 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
զեկ. Ս. Կոստանդյան
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին:
զեկ. Ս. Կոստանդյան
3. Հողի հարկի ապառքի և անշարժ գույքի հարկի արտոնություն սահմանելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
4. Փամբակ համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփանության՝ Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի տնօրինմանը փոխանցելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 09.02.2022թ-ի թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
զեկ. Ա. Օհանյան
7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն Ինգա Նորայրի Սիրեկանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:
զեկ. Ա. Օհանյան
8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն Օնիկ Օնիկի Պեպանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. «Աստղիկ» բարեգործական ՀՄԴ-ին կարի արտադրամաս շահագործելու նպատակով, Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող Վահագնի գյուղի վարչական կենտրոնի շենքի 142,2 քմ մակերեսով նկուղը վարձակալությամբ տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

13. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրք և տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

14. Փամբակ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ

1. Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեն կատարվել է.

1) ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի ընդհանուր եկամուտները նախատեսված 744.221.300 դրամի դիմաց փաստացի կազմել են 714.755.700 դրամ, կամ կատարողականը կազմել է 96.0 %: Նախորդ՝ 2022թ-ի համեմատությամբ եկամուտները ավել են կատարվել 150.203.900 դրամով՝ աճը կազմել է 126.6%:

2023 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 607.693.900 դրամի դիմաց փաստացի կատարվել է 581.881.600 դրամ՝ ապահովելով 95.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի վարչական մասի եկամուտները ավել են կատարվել 103.386.200 դրամով՝ ապահովելով 121.6% աճ:

Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 295.710.000 դրամի դիմաց փաստացի կատարվել են 270.100.900 դրամ՝ ապահովելով 91.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ֆոնդային մասի եկամուտները ավել են կատարվել 153.629.100 դրամով՝ ապահովելով 231.9% աճ:

2023 թվականի բյուջեի սեփական եկամուտները նախատեսվել են 163.090.700 դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 148.507.000 դրամ, կատարողականը կազմելով 91.0 %: 2022թ-ի համեմատությամբ եկամուտները ավել են գանձվել 36.989.000 դրամով՝ ապահովելով 133.2% աճ:

Ներկայացվում է Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

- Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով - տարվա համար նախատեսված 300.000 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 235.400 դրամ, կատարողականը կազմելով 78.5%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 108.400 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 68.4 %-ով:
- Հողի հարկի ապառքի մասով - տարվա համար նախատեսված 3.392.600 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 3.818.900 դրամ, կատարողականը կազմելով 112.6%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 1.345.200 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 65.7 %-ով:
- Անշարժ գույքի հարկի մասով - տարվա համար նախատեսված 23.331.800 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 18.653.700 դրամ, կատարողականը կազմելով 79.9%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 1.972.200 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 90.4 %-ով:
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով - տարվա համար նախատեսված 70.940.000 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 53.560.700 դրամ, կատարողականը կազմելով 75.5%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2.828.100 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 105.6 %-ով:
- Տեղական տուրքերի մասով - տարվա համար նախատեսված 4.862.600 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 5.265.400 դրամ, կատարողականը կազմել է 108.3%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 674.500 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 114.7 %-ով:
- Այլ եկամուտների մասով - տարվա համար նախատեսված 111.176.100 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 106.610.000 դրամ, կատարողականը կազմելով 95.9%:

Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.

1. Պաշտոնական դրամաշնորհների՝ դոտացիայի մասով – 2023թ-ի համար նախատեսված 401.679.000 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 401.679.000 դրամ, կատարողականը կազմել է 100.0%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 49.702.300 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 114.1 %-ով:
2. Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաների մասով – տարվա համար նախատեսված 595.700 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 595.700 դրամ, կատարողականը կազմել է 100.0%: Նախորդ տարվա ընթացքում մուտքեր չեն եղել:
3. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) մասով – տարվա համար նախատեսված 127.943.500 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 124.336.900 դրամ, կատարողականը կազմել է 97.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 65.240.200 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 210.4 %-ով:

2023թ-ի ընթացքում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի կատարվել է 137.226.800 դրամ հատկացում, նախատեսված 159.182.600 դրամի դիմաց՝ ապահովելով 86.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 106.811.400 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 451.2 %-ով:

2) ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 834,443.500 դրամի դիմաց փաստացի կատարվել են 762.728.000 դրամով, կամ կատարողականը կազմել է 91.4 %: Նախորդ՝ 2022թ-ի համեմատությամբ ծախսերը ավել են կատարվել 104.580.300 դրամով՝ աճը կազմել է 115.9%:

2. 2023թ տարեկան աշխատանքային պլանով / այսուհետ ՏԱՊ/ նախատեսված ծրագրերի լուծման ուղղությամբ 2023թ-ին իրականացվել են ներքոնշյալ աշխատանքները:

1) <u>Վահագնի և Արջուտ բնակավայրերի փողոցների նորոգում ասֆալտապատման միջոցով</u>

ՏԱՊ-ի <u>առաջին ծրագրի</u> կատարման ուղղությամբ իրականացվել է Վահագնի բնակավայրի ներհամայնքային 1195 մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ ասֆալտապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 66.341.670 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 36.487.918 դրամ:

Արջուտ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային 527մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ ասֆալտապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 57.748.700 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 31.761.785 դրամ:

2) <u>Բազում բնակավայրի նախկին համայնքապետարանի շենքի հիմնանորոգում որպես մշակույթի կենտրոն, Փամբակ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:</u>

ՏԱՊ-ով նախատեսված երկրորդ ծրագրի կատարման ուղղությամբ Բազում բնակավայրում իրականացվել է նախկին համայնքապետարանի 190,61 քմ մակերեսով շենքի հիմնանորոգման աշխատանքներ՝ որպես մշակույթի տուն, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 18.795.000 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 10.337.250 դրամ:
Փամբակ բնակավայրում իրականացվել է 140 քմ մակերեսով հանդիսությունների սրահի կառուցման աշխատանքներ, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 53.197.000 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 29.258.350 դրամ:

3) Լեռնապատ բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում:

ՏԱՊ-ով նախատեսված երրորդ ծրագրի կատարման ուղղությամբ Լեռնապատ բնակավայրում իրականացվել է գործող մանկապարտեզին կից՝ 77քմ մակերեսով մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 39.310.000 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 11.793.000 դրամ:

4) Մարգահովիտ, Լեռնապատ, Անտառամուտ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով:

ՏԱՊ-ով նախատեսված չորրորդ ծրագրի կատարման ուղղությամբ Մարգահովիտ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային 670մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհահատվածի նորոգման աշխատանքներ՝ տուֆապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 60.912.100 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 24.364.840 դրամ:

Լեռնապատ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային 250մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ տուֆապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 16.784.450 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 6.713.780 դրամ:

Անտառամուտ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային 443մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհահատվածի նորոգման աշխատանքներ՝ տուֆապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 24.268.460 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 9.707.384 դրամ:

2023թ-ին Փամբակ համայնքի 7 բնակավայրերում իրականացված սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 337.357. 380 դրամ, որից համայնքի նրդրումը՝ 160.424.307 դրամ՝ կազմելով ընդհանուր ծրագրերի 47 %-ը:

5) Միկրոավտոբուսի ձեռք բերում:

ՏԱՊ-ով նախատեսված հինգերորդ ծրագիրը չի իրականացվել:

6) Արջուտ բնակավայրում նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի արևմտյան մասնաշենքի վերանորոգման-արդիականացման աշխատանքներ:

ՏԱՊ-ով նախատեսված վեցերորդ ծրագրի կատարման ուղղությամբ Արջուտ բնակավայրում հիմնվել է այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատություն:
Ծրագիրը ֆինանսավորվել է «Յունիսեֆ»-ի Հայաստանյան գրասենյակի կողմից, արժեքը՝ 6.195.000 դրամ, համայնքի ներդրումը՝ 143.000 դրամ:

7) Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության ստեղծում:

ՏԱՊ-ով նախատեսված յոթերորդ ծրագրի կատարման ուղղությամբ Ազնվաձոր բնակավայրում նույնպես հիմնվել է այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատություն: Ծրագիրը ֆինանսավորվել է ԿԳՄՍ նախարարության, «Յունիսեֆ»-ի Հայաստանյան գրասենյակի և համայնքի կողմից, ընդհանուր՝ 15.205.020 դրամ արժողությամբ, համայնքի ներդրումը՝ 2.200.000 դրամ:

8) Փամբակի համայնքապետարանի շենքին կից՝ կցակառույցի կառուցում, համայնքապետարանի բակի նորոգում և բարեկարգում:

ՏԱՊ-ով նախատեսված ութերորդ ծրագրի կատարման ուղղությամբ համայնքապետարանին կից կառուցվել է կցակառույց և իրականացվել է բակի բարեկարգում: Աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 22.249.800 դրամ, որից՝ 9.152.200 դրամը վճարվել է 2023թ-ին, իսկ 13.097.600 դրամը վճարվել էր 2022թ-ին:

9) Դեբետ բնակավայրի խմելու ջրի ցանցի կառուցում:

ՏԱՊ-ով նախատեսված իններորդ ծրագրի կատարման ուղղությամբ Դեբետ բնակավայրում GIZ-ի և համայնքապետարանի համաֆինանսավորմամբ իրականացվել է խմելու ջրի ցանցի կառուցման աշխատանքներ, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 24.020.000 դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 8.020.000 դրամ:

Տարեկան հաշվետվությունը ներկայացնելուց հետո փոխմարզպետ Գոռ Ասրյանը ողջունեց բոլորին և գոհունակություն հայտնեց 2023թ-ի ընթացքում Փամբակ համայնքում իրականացված աշխատանքների վերաբերյալ: Նա նշեց որ հաշվետու տարվա ընթացքում համայնքի ղեկավարը և աշխատակազմը պատվով են իրականացրել իրենց առջև դրված պարտականությունները և արել են ամեն ինչ՝ համայնքի բնակիչների կենսապայմանները և նրանց մատուցվող ծառայությունների որակը բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես նշեց սեպտեմբեր ամսին Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին դիմավորելու և առաջնային հումանիտար աջակցություն ցուցաբերելու հարցում համայնքի ղեկավարի կողմից իրականացված մեծածավալ աշխատանքները: Հյուրերը և ավագանու անդամները 2023թ-ին Փամբակ համայնքում իրականացված աշխատանքները գնահատեցին դրական:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 002-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Հողի հարկի ապառքի և անշարժ գույքի հարկի արտոնություն սահմանելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Փամբակ համայնքի Եղեգնուտ գյուղի բնակիչ Կամո Վոլոդյայի Հովհաննիսյանի դիմումը, այն հանգամանքը, որ նրա որդին՝ Անդրանիկ Կամոյի Հովհաննիսյանը համարվում է 44-օրյա պատերազմում անհայտ կորած կամավորական, իսկ ինքը սոցիալապես անապահով է և չի կարողանում վճարել հարկերը, առաջարկվում է նրան ազատել սեփականության իրավունքով պատկանող 06-036-0061-0003 կադաստրային ծածկագրով 0,302 հա բնակելի կառուցապատման հողամասի, 06-036-0162-0045 կադաստրային ծածկագրով 0,682 հա խոտհարքի և 06-036-0162-0033 կադաստրային ծածկագրով 0,535 հա վարելահողի համար.

1) Մինչև 2021թ-ը հաշվարկված 4346 ՀՀ դրամ հողի հարկի ապառքից և նրա վրա հաշվարկված 1268 ՀՀ դրամ տույժից, ընդամենը՝ 5614 ՀՀ դրամ հողի հարկից:

2) 2021-2024թթ ներառյալ հաշվարկված 14736 ՀՀ դրամ անշարժ գույքի հարկից և նրա վրա հաշվարկված 1796 ՀՀ դրամ տույժից, ընդամենը՝ 16532 ՀՀ դրամ անշարժ գույքի հարկից:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 003-Ա/ :

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփանության՝ Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի տնօրինմանը փոխանցելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ Փամբակ համայնքի /Ազնվաձոր, Արջուտ, Անտառամուտ, Բազում, Դեբետ, Եղեգնուտ, Լեռնաջուր, Ձորագետ, Ձորագյուղ, Մարգահովիտ, Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ և Քարաբերդ բնակավայրերի/ սեփականություն համարվող փաստաթղթերը փոխանցել Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի տնօրինմանը:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 004-Ա/ :

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 09.02.2022թ-ի թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սարգիս Հակոբյանի առաջարկությունը, այն հանգամանքը, որ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը սկսել է իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնք

սահմանված չեն կազմակերպության կանոնադրությամբ, առաջարկվում է Փամբակ համայնքի ավագանու 09.02.2022թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 11-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ և այն շարադրել նոր խմբագրությամբ: Հիմնական փոփոխությունը իրականացվում է 2-րդ՝ ,,Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը,, կետում, սահմանելով գյուղատնտեսության, կոմունալ տնտեսության, ուղևորափոխադրման, կանաչապատման, ճանապարհների ընթացիկ նորոգման, սելավատարների մաքրման, փողոցային լուսավորության, բազմաբնակարան շենքերի սպասարկման, բեռնափոխադրման բնագավառներում ծառայությունների մատուցում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում / կցվում է որոշում N 005-Ա/ :

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է տալ համաձայնություն 20 լոտ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, 10 լոտ հողամասը վարձակալության իրավունքով հատկացնելուն և 2 լոտ հողամասերը կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում / կցվում է որոշում N 006-Ա/ :

6. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն Ինգա Նորայրի Սիրեկանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Ինգա Նորայրի Սիրեկանյանի դիմումը, վարձակալության իրավունքի վկայականները, առաջարկվում է տալ համաձայնություն Ինգա Նորայրի Սիրեկանյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում գտնվող չորս հողամասերը, կադաստրային արժեքով նրան օտարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 007-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն Օնիկ Օնիկի Պեպանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Օնիկ Օնիկի Պեպանյանի դիմումը, վարձակալության իրավունքի վկայականները, առաջարկվում է տալ համաձայնություն Օնիկ Օնիկի Պեպանյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում գտնվող երկու հողամասերը կադաստրային արժեքով նրան օտարելուն:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 008-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ տարեսկզբի ազատ մնացորդը 31.12.2023թ-ի դրությամբ կազմում է.
1) վարչական բյուջեի մասով 12.837.353 դրամ 90 լումա
2) ֆոնդային բյուջեի մասով 3.288.810 դրամ
3) Սուբվենցիայի մնացորդ 26.130.697 դրամ 80 լումա

Անհրաժեշտ է նշված գումարները ներառել բյուջեում և ուղղել համապատասխան ծախսային հոդվածներ:
Նախորդ տարվա պարտքերի մարման նպատակով.
- 390.000 դրամ նախատեսվել է Քարաբերդի վարչական շենքի կառուցման համար:
- 1.757.700 դրամ նախատեսվել է Բազումի մշակույթի տան նորոգման համար:
- 5.265.000 դրամ՝ Փամբակ համայնքի հանդիսությունների սրահի կառուցման համար:
- 880.000 դրամ՝ ճանապարհային տրանսպորտ նախահաշվով Դեբետ բնակավայրում ճանապարհի ընթացիկ նորոգման համար:

- 12.748.600 դրամ՝ ճանապարհային տրանսպորտ նախահաշվով ճանապարհների տուֆապատման համար:
- 9.339.500 դրամ փողոցների լուսավորության նախահաշվով՝ Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերի լուսավորության համակարգի կառուցման համար:
- 3.570.000 դրամ բնակարանային շինարարության նախահաշվով՝ Ձորագետի շենքի կապիտալ նորոգման համար:

Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է նաև 01.01.01՝ Կառավարման ապարատ նախահաշվով, ընդհանուր բնույթի ծառայություններ՝ 4239 հոդվածում ավելացնել 1.000.000 դրամ, համայնքի արխիվային փաստաթղթերը Հայաստանի ազգային արխիվին հանձնելու համար:

8.020.000 դրամ նախատեսվում է GIZ կազմակերպության կողմից Դեբետ բնակավայրում խմելու ջրի ջրագծի կառուցման համար, որպես համայնքի ներդրում:

800.000 դրամ նախատեսվում է համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի կողմից իրականացվող ,,Զարդանախշերի երկխոսություն,, ծրագրի համար, որպես համայնքի ներդրում:

968.000 դրամ նախատեսվում է Վահագնի գյուղում ոռոգման ջրամբարի կառուցման ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար:

55.395.200 նախատեսվում է ճանապարհային տրանսպորտով՝ Վահագնի և Արջուտ բնակավայրերում ճանապարհների ասֆալտապատման համար, որպես պետության կողմից հատկացվելիք մասնաբաժին:

Վերը նշված ծախսերը ավելացվել են տարեսկզբի ազատ մնացորդների և բյուջեի պահուստային ֆոնդից կատարված հատկացումների հաշվին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում / կցվում է որոշում N 009-Ն/ :

9. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը առաջարկեց Փամբակ համայնքի 2024թ-ի բյուջեից հատկացնել 2 000 000 դրամ գումար՝ 2024թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով: Նշված գումարը պլանավորել բյուջեի պահուստային ֆոնդում, մինչև համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը ավագանու հավանության արժանանալը և կոնկրետ ծախսային ուղղվածություն որոշելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փամբակ համայնքի մեջ ներառված են բացառապես գյուղական բնակավայրեր, մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում է գյուղատնտեսության ոլորտը՝ որպես առաջնահերթություն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում / կցվում է որոշում N 010-Ա/ :

10. ԼՍԵՑԻՆ - . «Աստղիկ» բարեգործական ՀՄԴ-ին կարի արտադրամաս շահագործելու նպատակով, Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող Վահագնի գյուղի վարչական կենտրոնի շենքի 142,2 քմ մակերեսով նկուղը վարձակալությամբ տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Վահագնի գյուղի վարչական կենտրոնի /նախկին Վահագնիի համայնքապետարանի/ շենքի 142,2 քմ մակերեսով նկուղը կարի արտադրամաս շահագործելու նպատակով, 10 տարի ժամկետով վարձակալությամբ «Աստղիկ» բարեգործական ՀՄԴ-ին օգտագործման տրամադրելուն: Տարածքի վարձակալության ընդհանուր արժեքը մեկ տարվա համար սահմանել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում / կցվում է որոշում N 011-Ա/ :

11. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրք և տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի դրույթները հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառման, գրանցամատյանների վարման կարգը, ինչպես նաև Փամբակ համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանների ձևերը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում / կցվում է որոշում N 012-Ն/ :

12. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024թ-ի բյուջեի հաստատմանն է հաջորդում Փամբակ համայնքի 2024թ-ի տարեկան աշխատանքային պլանի հաստատումը՝ համաձայն հավելվածի: ՏԱՊ-ում ներառված են 15 ծրագրեր, որոնց մի մասը նախատեսվում է իրականացնել սուբվենցիոն ծրագրերով, մի մասը՝ համայնքի բյուջեի և այլ ներդրողների համաֆինանսավորմամբ: ՏԱՊ-ում ներառված ծրագրերն են.

1) Դեբետ բնակավայրի խմելու ջրի ցանցի կառուցում:
2) Վահագնի բնակավայրում մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում:
3) Վահագնաձոր բնակավայրում մանկապարտեզի շենքի վերանորոգում:
4) Լեռնապատ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:
5) Ձորագյուղ բնակավայրերի գազաֆիկացում:
6) Եղեգնուտ բնակավայրերի գազաֆիկացում:
7) Մարգահովիտ բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով:
8) Ազնվաձոր բնակավայրի փողոցի ընթացիկ նորոգում ասֆալտապատման միջոցով:
9) Փամբակ բնակավայրի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգի նորոգում ՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ:
10) Վահագնաձոր բնակավայրի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգի նորոգում ՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ:
11) Բազում բնակավայրի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգի նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ:
12) Փամբակի համայնքապետարանի շենքի տանիքին արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում:
13) Վահագնի բնակավայրում ոռոգման ջրամբարի կառուցում:
14) Մասնակցային բյուջետավորում ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական ծրագրի իրականացում:
15) ,,Զարդանախշերի երկխոսություն,, ծրագրի շրջանակներում Բազումի մշակույթի տան տանիքին արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում և գործագործության սենյակի հիմնում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում / կցվում է որոշում N 013-Ա/ :

13. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2024 թվականի մարտի 21-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում ***/կցվում է որոշում N 014-Ա/:***

Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2024 թվականի մարտի 21-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 001-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի փետրվարի 15-ի թիվ 01 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի փետրվարի 15-ի թիվ 01 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին:
3. Հողի հարկի ապառքի և անշարժ գույքի հարկի արտոնություն սահմանելու մասին:
4. Փամբակ համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփանության՝ Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի տնօրինմանը փոխանցելու մասին:
5. Հայաստանի ՀանրապետությանԼոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 09.02.2022թ-ի թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն Ինգա Նորայրի Սիրեկանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:
8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն Օնիկ Օնիկի Պեպանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:

9. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:
11. «Աստղիկ» բարեգործական ՀՄԴ-ին կարի արտադրամաս շահագործելու նպատակով, Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող Վահագնի գյուղի վարչական կենտրոնի շենքի 142,2 քմ մակերեսով նկուղը վարձակալությամբ տրամադրելու մասին:
12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:
13. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրք և տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին:
14. Փամբակ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 002-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82.1-ին հոդվածի 6-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հաստատել Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել հաշվետու տարում Փամբակ համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

Հավելված 1
Փամբակ համայնքի ավագանու
2024թ-ի փետրվարի 15-ի թիվ 002-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեն կատարվել է.

1. ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի ընդհանուր եկամուտները նախատեսված 744.221.300 դրամի դիմաց փաստացի կազմել են 714.755.700 դրամ, կամ կատարողականը կազմել է 96.0 %: Նախորդ՝ 2022թ-ի համեմատությամբ եկամուտները ավել են կատարվել 150.203.900 դրամով՝ աճը կազմել է 126.6%:

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 607.693.900 դրամի դիմաց փաստացի կատարվել է 581.881.600 դրամ՝ ապահովելով 95.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի վարչական մասի եկամուտները ավել են կատարվել 103.386.200 դրամով՝ ապահովելով 121.6% աճ:

Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 295.710.000 դրամի դիմաց փաստացի կատարվել են 270.100.900 դրամ՝ ապահովելով 91.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ֆոնդային մասի եկամուտները ավել են կատարվել 153.629.100 դրամով՝ ապահովելով 231.9% աճ:

2023 թվականի բյուջեի սեփական եկամուտները նախատեսվել են 163.090.700 դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 148.507.000 դրամ, կատարողականը կազմելով 91.0 %: 2022թ-ի համեմատությամբ եկամուտները ավել են գանձվել 36.989.000 դրամով՝ ապահովելով 133.2% աճ:

Ներկայացվում է Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

- Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով - տարվա համար նախատեսված 300.000 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 235.400 դրամ, կատարողականը կազմելով 78.5%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 108.400 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 68.4 %-ով:
- Հողի հարկի ապառքի մասով - տարվա համար նախատեսված 3.392.600 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 3.818.900 դրամ, կատարողականը կազմելով 112.6%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 1.345.200 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 65.7 %-ով:
- Անշարժ գույքի հարկի մասով - տարվա համար նախատեսված 23.331.800 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 18.653.700 դրամ, կատարողականը կազմելով 79.9%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 1.972.200 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 90.4 %-ով:
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով - տարվա համար նախատեսված 70.940.000 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 53.560.700 դրամ, կատարողականը կազմելով 75.5%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2.828.100 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 105.6 %-ով:
- Տեղական տուրքերի մասով - տարվա համար նախատեսված 4.862.600 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 5.265.400 դրամ, կատարողականը կազմել է 108.3%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 674.500 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 114.7 %-ով:
- Այլ եկամուտների մասով - տարվա համար նախատեսված 111.176.100 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 106.610.000 դրամ, կատարողականը կազմելով 95.9%:

Որից՝

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարների մասով - տարվա համար նախատեսված 12.069.300 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 11.634.900 դրամ, կատարողականը կազմել է 96.4%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1.195.700 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 111.5 %-ով:

2. Այլ գույքի վարձակալության մասով - տարվա համար նախատեսված 1.584.900 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 1.033.600 դրամ, կատարողականը կազմել է 65.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 426.400 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 70.8%-ով:

3. Տեղական վճարների մասով - տարվա համար նախատեսված 12.538.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 15.444.800 դրամ, կատարողականը կազմել է 122.4 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2.483.400 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 119.3 %-ով:

4. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով - տարվա համար նախատեսված 4.000.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 4.393.200 դրամ, կատարողականը կազմել է 109.8 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 471.000 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 112.0 %-ով:

5. Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվություններ) մասով - տարվա համար նախատեսված 41.000.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 31.000.000 դրամ, կատարողականը կազմել է 75.6 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 16.000.000 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 206.7 %-ով:

6. Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված կապիտալ տրանսֆերտների (նվիրատվություններ արտաքին և ներքին աղբյուրներից) մասով - տարվա համար նախատեսված 8.583.900 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 8.537.200 դրամ, կատարողականը կազմել է 99.5 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է կատարվել 18.422.500 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 31.7 %-ով:

7. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների մասով - տարվա համար նախատեսված 31.400.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 34.566.300 դրամ, կատարողականը կազմել է 110.1 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է

կատարվել 33.323.000 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 2780.2 %-ով:

Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.

1. Պաշտոնական դրամաշնորհների՝ դոտացիայի մասով – 2023թ-ի համար նախատեսված 401.679.000 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 401.679.000 դրամ, կատարողականը կազմել է 100.0%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 49.702.300 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 114.1 %-ով:
2. Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաների մասով – տարվա համար նախատեսված 595.700 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 595.700 դրամ, կատարողականը կազմել է 100.0%: Նախորդ տարվա ընթացքում մուտքեր չեն եղել:
3. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) մասով – տարվա համար նախատեսված 127.943.500 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 124.336.900 դրամ, կատարողականը կազմել է 97.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 65.240.200 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 210.4 %-ով:

2023թ-ի ընթացքում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի կատարվել է 137.226.800 դրամ հատկացում, նախատեսված 159.182.600 դրամի դիմաց՝ ապահովելով 86.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 106.811.400 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 451.2 %-ով:

2. ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 834,443.500 դրամի դիմաց փաստացի կատարվել են 762.728.000 դրամով, կամ կատարողականը կազմել է 91.4 %: Նախորդ՝ 2022թ-ի համեմատությամբ ծախսերը ավել են կատարվել 104.580.300 դրամով՝ աճը կազմել է 115.9%:

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման (հոդվածների խմբերի) ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան նախատեսված /պլանավորված/	Փաստաց /կատարված/	Կատարման %
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	157300.0	153590.3	97.6
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	64852.6	57423.8	88.5
ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	199103.8	194138.0	97.5
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ	23565.8	23450.8	99.5
ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ	3773.0	3298.5	87.4
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	388828.3	351820.5	90.5
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	3500.0	3406.2	97.3
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	9850.0	5840.0	59.3
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ ԿԱՄ ԿԱՊԻՏԱԼ ԱԿՏԻՎԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	13670.0	6470.0	47.3
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ	-30000.0	-36710.1	121.8

ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ			
ԸՆԴԱՄԵՆԸ	834443.5	762728.0	91.4

Համայնքի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան նախատեսված /պլանավորված/	Փաստացի /կատարված/	Կատարման %
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	311611.9	294336.7	94.5
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	196071.6	172788.5	88.1
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	79384.0	79384.0	100
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	102181.6	80576.4	78.9
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	0	0	0
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	54831.4	52005.4	94.8
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	88363.0	81637.0	92.4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2000.0	2000.0	100

ԸՆԴԱՄԵՆԸ	834443.5	762728.0	91.4

- Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 12.837.353 դրամ 90 լումա:
- Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 3.288.810 դրամ:

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդից՝ 880.0 հազ դրամը կմնա վարչական բյուջեում որպես նախորդ տարվա ապառք, իսկ 11.957.353 դրամ 90 լուման ամբողջությամբ կուղղվի 2024թվականի ֆոնդային բյուջեի ծախսերի իրականացման համար:

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի մշտական բնակչության թիվը ՀՀ ոստիկանության ԱՎՎ Գուգարքի անձնագրային բաժնի կողմից տրված տվյալներով 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 13285 մարդ, որից տղամարդիկ կազմում են 6715 մարդ, կանայք՝ 6570:

Նպաստառուների թիվը՝ 569 ընտանիք:

2023 թվականի ընթացքում Փամբակ համայնքում ծնվել է 109 երեխա, մահացել 79 մարդ, գրանցվել է 27 ամուսնություն, 2 ամուսնալուծություն:

Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝

1. Համայնքի ավագանին՝ բաղկացած 15 անդամից, (ընտրված 2021 թվականի դեկտեմբերի 5-ին) լիազորությունների սկիզբը՝ 2021 թվականի դեկտեմբերի 23:
2. Համայնքի ղեկավարը ընտրվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին, լիազորությունների սկիզբը՝ 2021 թվականի դեկտեմբերի 23:

Համայնքի ղեկավարն իր լիազորությունները իրականացնում է համայնքային քաղաքական, վարչական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքային միավորների թիվը 76-ն է, որից քաղաքական պաշտոններ՝ 3, հայեցողական պաշտոններ՝ 2, վարչական պաշտոններ՝ 14, համայնքային ծառայության պաշտոններ՝ 42, քաղաքացիական աշխատանք իրականացնողներ՝ 7, տեխնիկական սպասարկման անձնակազմ՝ 8:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայքապետարանի աշխատակազմում թափուր հաստիքների թիվը 7-ն է:

2023 թվականի ընթացքում համայնքային թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 2 մրցույթ, որից 1-ը չի կայացել՝ դիմողներ չլինելու պատճառով: Հայտարարված մրցույթներին մասնակցած 3 անդամներից հաղթող են ճանաչվել 3:

ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

1. Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանությանբաժին
2. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
3. Իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժին
4. Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)

Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններն են.
1.Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ
2.Փամբակ համայնքի «Մարգահովիտի կրթամարզամշակութային համալիր (ԿՄՄՀ)» ՀՈԱԿ
3. Փամբակ համայնքի «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» ՀՈԱԿ
4.Փամբակ համայնքի «Լեռնապատի մանկապարտեզ» ՀՈԱԿ
5. Փամբակ համայնքի «Եղեգնուտի Հեքիաթ մանկապարտեզ» ՀՈԱԿ
6. Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ
7. Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ
8. Փամբակ համայնքի «Բազումի մանկապարտեզ» ՀՈԱԿ
9. Փամբակ համայնքի «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ:

2023 թվականի ընթացքում համայնքապետարանում մուտքագրվել է քաղաքացիներից ստացված 741 դիմում , որից՝

- Դրամական օգնություն տրամադրելու մասին՝ 95 դիմում.
- Քաղաքաշինության և հողօգտագործման հարաբերությունները կարգավորելու մասով՝ 646 դիմում:

Դիմումներին սահմանված ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:

Իրավաբանական անձանցից ստացվել է 2696 գրություն:

Համայնքապետարանի աշխատակազմի կողմից պատրաստվել են 2607 ելից գրություններ, որոնք ուղարկվել են հասցեատերերին:

Համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրվել է թվով 3300 տեղեկանք՝ ըստ պահանջի:

2023 թվականի ընթացքում համայնքապետարանում ստացված հայտերին համապատասխան համայնքի ղեկավարի կողմից համայնքի վարչական տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտներին տրվել են հետևյալ թույլտվությունները
1. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառք՝ 151 թուլտվություն
2. ծխախոտի արտադրանքի վաճառք՝ 119 թույլտվություն
3. արտաքին գովազդի տեղադրում՝ 2 թույլտվություն,
4. հանրային սննդի կազմակերպման և իրացման՝ 33 թույլտվություն
5. տեխնիկական հեղուկներ՝ 0 թույլտվություն
6. հեղուկ վառելիքի վաճառք՝ 6 թույլտվություն
7. Ֆիրմային անվան՝ 1 թույլտվություն
8. ժամը 24:00-ից հետո գործունեության՝ 5 թույլտվություն:

Համայնքի ղեկավարն ընդունել է 1387 որոշում, արձակել 115 կարգադրություն:

Կայացել է Փամբակ համայնքի ավագանու 15 նիստ, ընդունվել 157 որոշում:

Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 104 հրաման:

Համայնքի ղեկավարի մոտ ընդունելությանը մասնակցել է 148 քաղաքացի:

2023թ-ի ընթացքում համայնքապետարանի կողմից տրամադրվել է 30 շինարարության թույլտվություն և 22 ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

Տրամադրվել է 76 նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) բնակելի տների և հասարակական սպասարկման օբյեկտների կառուցման համար:

Փոփոխվել է 8 հողակտորների նպատակային նշանակություն, որի ընթացքում, որպես կադաստրային արժեքի տարբերություն համայնքի բյուջե է մուտքագրվել 315700 ՀՀ դրամ:

Օրինականացվել է 24 ինքնակամ կառուցված շինություն որի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 2572174 ՀՀ դրամ:

Կազմակերպվել և անց է կացվել թվով 7 աճուրդ, արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 36"710"100 ՀՀ դրամ:

Հասցեավորվել է 481 անշարժ գույք:

Առաջին պետական գրանցման ներկայացնելու համար կայացվել է հողահատկացման հիմքերի վերականգնման 219 որոշում:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված 2
Փամբակ համայնքի ավագանու
2024թ-ի փետրվարի 15-ի թիվ 002-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ /ՏԱՊ/ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գ. Փամբակ

2024թ

2023թ տարեկան աշխատանքային պլանով /այսուհետ ՏԱՊ/ նախատեսված ծրագրերի լուծման ուղղությամբ 2023թ-ին իրականացվել են ներքոնշյալ աշխատանքները:

1) Վահագնի և Արջուտ բնակավայրերի փողոցների նորոգում ասֆալտապատման միջոցով

ՏԱՊ-ի առաջին ծրագրի կատարման ուղղությամբ իրականացվել է Վահագնի բնակավայրի ներհամայնքային 1195 մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ ասֆալտապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **66.341.670** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **36.487.918** դրամ:

Արջուտ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային 527մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ ասֆալտապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **57.748.700** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **31.761.785** դրամ:

2) Բազում բնակավայրի նախկին համայնքապետարանի շենքի հիմնանորոգում որպես մշակույթի կենտրոն, Փամբակ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:

ՏԱՊ-ով նախատեսված երկրորդ ծրագրի կատարման ուղղությամբ Բազում բնակավայրում իրականացվել է նախկին համայնքապետարանի 190,61 քմ մակերեսով շենքի հիմնանորոգման աշխատանքներ՝ որպես մշակույթի տուն, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **18.795.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **10.337.250** դրամ:

Փամբակ բնակավայրում իրականացվել է 140 քմ մակերեսով հանդիսությունների սրահի կառուցման աշխատանքներ, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **53.197.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **29.258.350** դրամ:

3) Լեռնապատ բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում:

ՏԱՊ-ով նախատեսված երրորդ ծրագրի կատարման ուղղությամբ Լեռնապատ բնակավայրում իրականացվել է գործող մանկապարտեզին կից՝ 77քմ մակերեսով մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **39.310.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **11.793.000** դրամ:

4) Մարգահովիտ, Լեռնապատ, Անտառամուտ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով:

ՏԱՊ-ով նախատեսված չորրորդ ծրագրի կատարման ուղղությամբ Մարգահովիտ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային 670մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհահատվածի նորոգման աշխատանքներ՝ տուֆապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **60.912.100** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **24.364.840** դրամ:

Լեռնապատ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային 250մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ տուֆապատման միջոցով, ծրագրի

ընդհանուր արժեքը կազմել է **16.784.450** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **6.713.780** դրամ:

Անտառամուտ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային 443մ երկարությամբ 5-6մ լայնությամբ ճանապարհահատվածի նորոգման աշխատանքներ՝ տուֆապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **24.268.460** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **9.707.384** դրամ:

2023թ-ին Փամբակ համայնքի 7 բնակավայրերում իրականացված սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է **337.357. 380** դրամ, որից համայնքի նրդրումը՝ **160.424.307** դրամ՝ կազմելով ընդհանուր ծրագրերի 47 %-ը:

5) Միկրոավտոբուսի ձեռք բերում:

ՏԱՊ-ով նախատեսված հինգերորդ ծրագիրը չի իրականացվել:

6) Արջուտ բնակավայրում նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի արևմտյան մասնաշենքի վերանորոգման-արդիականացման աշխատանքներ:

ՏԱՊ-ով նախատեսված վեցերորդ ծրագրի կատարման ուղղությամբ Արջուտ բնակավայրում հիմնվել է այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատություն: Ծրագիրը ֆինանսավորվել է «Յունիսեֆ»-ի Հայաստանյան գրասենյակի կողմից, արժեքը՝ **6.195.000** դրամ, համայնքի ներդրումը՝ **143.000** դրամ:

7) Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության ստեղծում:

ՏԱՊ-ով նախատեսված յոթերորդ ծրագրի կատարման ուղղությամբ Ազնվաձոր բնակավայրում նույնպես հիմնվել է այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատություն: Ծրագիրը ֆինանսավորվել է ԿԳՄՍ նախարարության, «Յունիսեֆ»-ի Հայաստանյան գրասենյակի և համայնքի կողմից, ընդհանուր՝ **15.205.020** դրամ արժողությամբ, համայնքի ներդրումը՝ **2.200.000** դրամ:

8) Փամբակի համայնքապետարանի շենքին կից՝ կցակառույցի կառուցում, համայնքապետարանի բակի նորոգում և բարեկարգում:

ՏԱՊ-ով նախատեսված ութերորդ ծրագրի կատարման ուղղությամբ համայնքապետարանին կից կառուցվել է կցակառույց և իրականացվել է բակի բարեկարգում: Աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 22.249.800 դրամ, որից՝ 9.152.200 դրամը վճարվել է 2023թ-ին, իսկ 13.097.600 դրամը վճարվել էր 2022թ-ին:

9) Դեբետ բնակավայրի խմելու ջրի ցանցի կառուցում:

ՏԱՊ-ով նախատեսված իններորդ ծրագրի կատարման ուղղությամբ Դեբետ բնակավայրում GIZ-ի և համայնքապետարանի համաֆինանսավորմամբ իրականացվել է խմելու ջրի ցանցի կառուցման աշխատանքներ, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **24.020.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ **8.020.000** դրամ:

ՏԱՊ-Ի ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնք /բնակավայր/	2023թ-ին իրականացված ծրագրի անվանումը	Համայնքի ներդրում /ՀՀ դրամ/	Պետ. բյուջեի ներդրում /ՀՀդրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /ՀՀ դրամ/	Ընդամենը՝ ծրագրի արժեք /ՀՀ դրամ/
Փամբակ /Վահագնի/	Վահագնի բնակավայրի ներհամայնքային ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ ասֆալտապատման միջոցով	36.487.918	29.853.752		66.341.670
Փամբակ /Արջուտ/	Արջուտ բնակավայրի ներհամայնքային ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ ասֆալտապատման միջոցով	31.761.785	25.986.915		57.748.700
Փամբակ /Բազում/	Բազում բնակավայրինախկին համայնքապետարանի 190,61 քմ մակերեսով շենքի հիմնանորոգման աշխատանքներ՝ որպես մշակույթի տուն	10.337.250	8.457.750		18.795.000
Փամբակ /Փամբակ/	Փամբակ բնակավայրի 140 քմ մակերեսով հանդիսությունների սրահի կառուցման աշխատանքներ	29.258.350	23.938.650		53.197.000
Փամբակ /Լեռնապատ/	Լեռնապատ բնակավայրի գործող մանկապարտեզին կից՝ 77քմ մակերեսով մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ	11.793.000	27.517.000		39.310.000
Փամբակ /Մարգահովիտ/	Մարգահովիտ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային ճանապարհահատվածի նորոգման աշխատանքներ՝	24.364.840	36.547.260		60.912.100

	տուֆապատման միջոցով				
Փամբակ /Լեռնապատ/	Լեռնապատ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային ճանապարհի նորոգման աշխատանքներ՝ տուֆապատման միջոցով	6.713.780	10.070.670		16.784.450
Փամբակ /Անտառամուտ/	Անտառամուտ բնակավայրում իրականացվել է ներհամայնքային ճանապարհահատվածի նորոգման աշխատանքներ՝ տուֆապատման միջոցով	9.707.384	14.561.076		24.268.460
Փամբակ /Արջուտ/	Արջուտ բնակավայրում հիմնվել է այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատություն:	143.000		«Յունիսեֆ»-ի Հայաստանյան գրասենյակի կողմից, արժեքը՝ 6.195.000	6.338.000
Փամբակ /Ազնվաձոր/	Ազնվաձոր բնակավայրում նույնպես հիմնվել է այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատություն:	2.200.000	ԿԳՄՍ նախարարության, 7.737.010	«Յունիսեֆ»-ի Հայաստանյան գրասենյակի կողմից, արժեքը՝ 5.268.010	15.205.020
Փամբակ /Փամբակ/	Համայնքապետարանին կից կառուցվել է կցակառույց և իրականացվել է բակի բարեկարգում:	22.249.800			22.249.800
Փամբակ /Դեբետ/	Դեբետ բնակավայրում իրականացվել է խմելու ջրի ցանցի կառուցման աշխատանքներ	8.020.000		Գերմանիայի միջազգային հիմնադրամ՝ GIZ 16.000.000	24.020.000

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 003-Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՊԱՌՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և 8-րդ կետերով և հիմք ընդունելով Փամբակ համայնքի Եղեգնուտ գյուղի բնակիչ Կամո Վոլոդյայի Հովհաննիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի գ. Եղեգնուտ 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 7 հասցեի բնակիչ Կամո Վոլոդիայի Հովհաննիսյանին (ՀԾՀ՝ 3004591227) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող 06-036-0061-0003 կադաստրային ծածկագրով 0,302 հա բնակելի կառուցապատման հողամասի, 06-036-0162-0045 կադաստրային ծածկագրով 0,682 հա խոտհարքի և 06-036-0162-0033 կադաստրային ծածկագրով 0,535 հա վարելահողի համար.

1) Մինչև 2021թ-ը հաշվարկված 4346 ՀՀ դրամ հողի հարկի ապառքից և նրա վրա հաշվարկված 1268 ՀՀ դրամ տույժից, ընդամենը՝ 5614 ՀՀ դրամ հողի հարկից:

2) 2021-2024թթ ներառյալ հաշվարկված 14736 ՀՀ դրամ անշարժ գույքի հարկից և նրա վրա հաշվարկված 1796 ՀՀ դրամ տույժից, ընդամենը՝ 16532 ՀՀ ՀՀ դրամ անշարժ գույքի հարկից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 004-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՏՆՕՐԻՆՄԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ Փամբակ համայնքի /Ազնվաձոր, Արջուտ, Անտառամուտ, Բազում, Դեբետ, Եղեգնուտ, Լեռնաջուր, Ձորագետ, Ձորագյուղ, Մարգահովիտ, Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ և Քարաբերդ բնակավայրերի/ սեփականություն համարվող փաստաթղթերը փոխանցել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի տնօրինմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 005-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.02.2022Թ-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սարգիս Հակոբյանի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 09.02.2022թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 11-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ և այն շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՋԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի
ավագանու 2024թվականի
փետրվարի 15-ի 005-Ա որոշմամբ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Գ. Փամբակ
2024թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Փամբակ կոմունալ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի տնտեսությունը սպասարկելու նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

1.2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր),ի դեմս համայնքի ավագանու,որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարը:

1.3.Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով, հիմնադրի, համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն):

1.4.Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝Փամբակ կոմունալ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

1.5.Կազմակերպությունը ունի ՀՀ զինանշանի պատկերով և հայերեն անվանմամբ կլոր կնիք և անհատականացման այլ միջոցներ:

1.6.Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.7.Կազմակերպությունը ձեռք է բերում և իրականացնում Կանոնադրությամբ ամրագրված գործառույթներ, ստանձնում է անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

1.8.Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.9.Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների համար:

1.10.Կազմակերպության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, գ.Փամբակ փող. 1 շ. 23, փոստային դասիչ՝ 2041:

1.11. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.12.Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.13.Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.14.Կազմակերպությունն իր կանոնադրական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք է բերում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

1.15.Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը Փամբակ համայնքի վարչական տարածքի բոլոր բնակավայրերի սահմաններում գյուղատնտեսության, կոմունալ տնտեսության, ուղևորափոխադրման, կանաչապատման, ճանապարհների ընթացիկ նորոգման, սելավատարների մաքրման, փողոցային լուսավորության, բազմաբնակարան շենքերի սպասարկման, բեռնափոխադրման բնագավառում ծառայությունների մատուցումն է, որն ապահովելու նպատակով Կազմակերպությունը իրականացնում է հետևյալ գործառույթները՝
ա) իրականացնում է համայնքի վարչական տարածքում բարեկարգման աշխատանքներ.
բ) կատարում է աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ, ինչպես նաև կարող է իրականացնել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ լիազորություններ.
գ) իրականացնում է համայնքի ուղևորափոխադրման գործունեություն, երթերի գրաֆիկից դուրս ազատ ժամանակահատվածում էքսկուրսիաների կազմակերպում /ուղևորափոխադրում/.
դ) կատարում է համայնքի ձմեռային պաշտպանության համար անհրաժեշտ աշխատանքներ.
ե)կազմակերպում է հանգստի հանրային վայրերի խնամքը և պահպանությունը, կատարում կանաչապատման ծառատնկման, ծառերի և թփերի էտման աշխատանքներ.
զ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող գործունեություն, որը պետք է բխի համայնքի շահերից.
է) կատարում է համայնքային ենթակայության ճանապարհների ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ.
ը) կատարում է անձրևաջրատարների և սելավատարների մաքրման, պահպանության, ջրամբարների մաքրման և պահպանության ինչպես նաև գետերի հունի մաքրման աշխատանքներ.

թ) կատարում է համայնքի փողոցային լուսավորության վերականգնման, շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ աշխատանքներ.

ժ) կազմակերպում է բազմաբնակարան շենքերի սպասարկում.

ի) կատարում է բեռնափոխադրման և տեխնիկայի ծառայությունների մատուցման աշխատանքներ.

լ) կազմակերպում է գյուղատնտեսական տեխնիկայով ծառայությունների մատուցում.

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1.Կազմակերպության կառուցվածքը որոշում է կազմակերպության հիմնադիրը:
3.2. Կազմակերպությունը աշխատանքներն իրականացնում է հաստիքային անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում կազմակերպության որակի համար:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, նրա լիազորած մարմինը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար), գործադիր մարմինը (այսուհետ՝Կազմակերպության տնօրեն):

4.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.3. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ Կազմակերպության հիմնադրումը.

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.

ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

4.4.Համայնքի ղեկավարն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.5.Համայնքիղեկավարը՝

ա) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ)իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

գ)կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ուցուցումները.

դ)լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

ե)վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ)վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համայնքի ավագանու որոշմամբ համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը)իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

4.6. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ Կազմակերպության տնօրենը, ով աշխատանքի նշանակվում և ազատվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի որոշումներով, Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի որոշումների, Կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4.7. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը, համայնքին և (կամ) պետությանը պատճառված վնասի համար: Կազմակերպության տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:
4.8. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
4.9.Տնօրենը՝
ա)առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.
բ)օրենսդրությամբ, Հիմնադրի և Համայնքի ղեկավարի որոշումներով և Կազմակերպության Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
գ)տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր:
դ)աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:
ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ:
զ)սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու աշխատակիցների իրավասությունները:
է)օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:
ը)ապահովում է ներքի նաշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը:
թ)կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակի նախագիծը ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում է Հիմնադրի հաստատմանը:
ժ) տնօրենի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի գրավոր որոշման համաձայն նրա լիազորությունները իրականացնում է այլ անձ:
ի)իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5.1.Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
5.2.Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր Կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
5.3.Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ Հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:
5.4.Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:
5.5.Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող ցանկացած գույք:
5.6. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:
5.7.Կազմակերպությունն իր գործառույթներն արդյունավետ կազմակերպելու նպատակով իրավունք ունի վարձակալել ու ցանկացած գույք:

5.8.Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավել՝բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

5.9.Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

5.10.Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

5.11. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա)Հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած միջոցները.

բ)իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների տրամադրած դրամաշնորհները և նվիրատվությունները:Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

